ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 12 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գայանե Աշուղյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գայանե Աշուղյանը 23.02.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթը եւ/կամ ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի դրույթները:

Դիմողի կարծիքով, երկու տարբեր իրավական ակտերով օրենսդրի կողմից տրված իրավակարգավորումների արդյունքում իրավահարաբերությունը բոլորովին այլ բնույթ է ստանում, երբ դատարանը՝ օրենքի պահանջի կատարմամբ հրապարակում է միայն դատական ակտի եզրափակիչ մասը, սակայն բողոքարկման ժամկետի սկիզբը՝ օրենքի պահանջի կատարմամբ շարունակվում է հաշվառվել հրապարակման պահից: Այս դեպքում

չի պահպանվում այն պայմանը, ըստ որի՝ բողոքարկման ընթացակարգը եւ բողոքարկվող դատական ակտն իր բովանդակությամբ պետք է միաժամանակ հասու լինեն բողոքարկողին: Մինչդեռ տվյալ դեպքում, մի կողմից, սկսում է հոսել բողոքարկման ժամկետը, իսկ, մյուս կողմից՝ բողոքարկումը դեռ չունի դատական ակտի բովանդակային մասը, այսինքն՝ չունի բողոքարկման իրական հնարավորություն, իր տրամադրության տակ չկան բողոքի արդյունավետության համար անհրաժեշտ կարեւոր տվյալներ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով եւ ելնելով խնդրո առարկա դիմումի եւ կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ հիշյալ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է քննության ընդունման մասնակիորեն՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

1. Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ կարծում ենք, որ դիմումի ընդհանուր տրամաբանությունը վկայում է, որ կոնկրետ տվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտի արդյունք են: Այսինքն՝ ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացվում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես ՀՀ սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»: Բացի դրանից, գտնում ենք, որ խնդրո առարկա դիմումը ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ ակնհայտ անհիմն է:

2. Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթի եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի դրույթների մասով գտնում ենք, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Դիմողը միջնորդություն է ներկայացրել պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, եւ 69-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Գայանե Աշուղյանի անհատական դիմումով գործի՝ ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, քննության ընդունումը մերժել:

2. Քաղաքացի Գայանե Աշուղյանի անհատական դիմումով գործը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթի մասով եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի մասով ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

4. Բավարարել քաղաքացի Գայանե Աշուղյանի անհատական դիմումով ներկայացված պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը:

Նախագահող՝

Անդամներ՝

12 մարտի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/ 1-6